ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
11 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 10/02/2022 թ-ի թիվ 02/107.4/00988-2022 գրությունը և 13/12/2021 թ-ի թիվ 831-Ա որոշումը, ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, 41-րդ հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել ՀՀ ԼՄ Լերմոնտովո համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022 թ-ի հիմնական միջոցառումների Պլանը՝ համաձայն հավելվածի:

2.ՀՀ ԼՄ Լերմոնտովոյի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշման ծանոթացումը կատարողներին:

3.Սույն որոշմոն 1-ին կետով հաստատված պլանի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել համայնքի ղեկավարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

Հավելված.
Լերմոնտովո համայնքի ղեկավարի
11 փետրվարի 2022թ
թիվ 13 որոշման

Պ Լ Ա Ն
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

ՀՀ ը/կ	Միջոցառումը և թեման	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Կատարողներ	Մասնակիցներ	Նշումներ
1	2	3	4	5	6	7
Ի ԱՒՆ ՓԾ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ						
1. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ						
1.1	Հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում	մարտ-ապրիլ	Համայնքի ղեկավար	Համայնքի ՔՊ ղեկավար կազմ, տարահանման հանձնաժողով		
1.2	Մասնակցություն Լոռու մարզի համայնքներում քաղաքացիական պաշտպանության, խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տարահանման պլանների, տարահանման մարմինների, գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովների և ՔՊ ոլորտը կարգավորող այլ փաստաթղթերի ուսումնասիրության, մշակման և ճշգրտման, ինչպես նաև պաշտպանական կառույցների պահպանման, նախատեսման և կառուցման ուղղություններով մեթոդական և գործնական օգնության ցուցաբերմանը	հուլիս				
1.3	Մասնակցություն ռազմական դրության ժամանակ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման համար ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի տարածքում հաշվառված ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից	Տարվա ընթացքում	Համայնքի ղեկավար	Համայնքի աշխատակազմ		

ՀՀ ը/կ	Միջոցառումը և թեման	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Կատարողներ	Մասնակիցներ	Նշումներ
1	2	3	4	5	6	7
	չառգրավվող ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների քանակի ճշգրտմանը					
II ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ						
2. Օպերատիվ տակտիկական պատրաստություն						
2.1 Շտաբային ուսումնավարժություն						
2.1.1	Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների օջախի վերացում	հուլիս				
2.1.2	«Անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում» թեմայով ՇՈՒ-ի անցկացում	05.08.2022թ	Լերմոնտովո համայնքի ղեկավար	Լերմոնտովո համայնքի ղեկավար կազմ	Համայնքապետարանի աշխատակազմ, կազմավորումների հրամանատարներ	
2.1.3	ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի անտառային ու այլ բուսածածկ տարածքներում առաջացած խոշոր հրդեհների մարման աշխատանքների կազմակերպում և իրականացում	սեպտեմբեր-հոկտեմբեր				
3. Պլանների և ծրագրերի մշակում						
3.1	«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» Լերմոնտովո համայնքի ղեկավարի որոշման նախագծի մշակում և համաձայնեցում Լոռու ՄՓՎ-ի հետ	մինչև դեկտեմբեր	Համայնքի ղեկավար	Համայնքի աշխատակազմ		

Լերմոնտովո համայնքի ղեկավար՝ Էդիկ Չախալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
11 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվականի N 14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 08/02/2022 թ-ի թիվ 02/108,3,2/00927-2022 գրությունը և ՀՀ Կառավարության 2011 թ-ի նոյեմբերի 10-ի թիվ 1582-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներին համապատասխան, ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Ստեղծել համայնքային հանձնաժողով արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման նպատակով՝ հետևյալ կազմով.

1.Չախալյան Էդիկ-նախագահ /համայնքի ղեկավար/

2.Խառատյան Ռաֆիկ /վարչական ղեկավար/

3.Գալուստյան Արտյոմ /առաջատար մասնագետ/

4.Բոլոտինա Մարիյա /առաջատար մասնագետ-հաշվապահ/

5.Բոլոտին Իվան /ավագանու անդամ/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ՝

11 փետրվարի 2022 թվականի N 15

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Լերմոնտովո համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Լերմոնտովո համայնքի.

1) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:

2.Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

Հավելված N 1

Լերմոնտովո համայնքի ղեկավարի
«11» 02 2022 թ-ի N 15 որոշման

ԿԱԶՄ

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝

1. խորհրդի ղեկավար՝ Էդիկ Չախալյան /համայնքի ղեկավար/,
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Արտյոմ Գալուստյան /առաջատար մասնագետ/,
3. խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Անահիտ Հարությունյան /աշխատակազմի քարտուղար/,
4. խորհրդի անդամներ՝

1) ավագանի Իվան Բոլոտին,
2) ավագանի Վասիլի Կորոլյով,
3) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Արթուր Թումասյան /հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար/
բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Համազասպ Բոչոլյան
գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Վիկտոր Մակշանով
դ.կապի պատասխանատու՝ Ռոզա Խեչումյան՝ համայնքի ղեկավարի տեղակալ
ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Մարիյա Գալիցինա/«Մարգահովիտ բժշկական կենտրոն» ՓԲԸ՝ բուժկետի բուժքույր տնօրեն/
զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Վաչագան Օսիպյան /համայնքի անասնաբույժ/,
է. էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Արմեն Գասպարյան /«ՀԷՑ» ՓԲԸ,
ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Իգոր Բելոուսով,
թ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Նադեժդա Շուբինա
ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Վասիլի Կորոլյոով :

Հավելված N 2
Լերմոնտովո համայնքի ղեկավարի
«11» 02 2022 թ-ի N 15 որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը.

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Լերմոնտովո համայնքի աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Լերմոնտովոյի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

2. ԱՌԿ խորհրդի ԱՌԿ նախապատրաստական գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) Աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի միջոցառումների ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացնումը՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) վարժանքների կազմակերպումը և անցկացնումը

14) աղետների ռիսկի կառավարման պլանի ճշգրտումը:

3. ԱՌԿ խորհրդի ԱԻ արձագանքման գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխման ապահովումը,

8) ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,

9) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,

10) առաջին օգնության իրականացման ապահովումը,

11) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,

12) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

13) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,

14) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

15) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպման, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցման ապահովումը,

16) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպման ապահովումը,

17) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերման, գրանցման և համապատասխան սոցիալական ծառայություններ ուղղորդման ապահովումը,

18) ընտանիքներին երեխաների վերամիավորման կազմակերպման ապահովումը,

19) աղետից հետո ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատման կազմակերպման ապահովումը,

20) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին: